

Զորավար Անդրանիկ -150

Փետրվարի 25- ին Հայաստանի ազգային գրադարանի դահլիճում նշվեց Անդրանիկ Օզանյանի ծննդյան 150-ամյակը: Միջոցառումը կազմակերպել էին Ազգային գրադարանի Արվեստի և ոչ գրքային հրատարակությունների բաժնի աշխատակիցները: Բաժնի կողմից կազմակերպվել էր գրականության և լուսանկարների ցուցադրություն՝ նվիրված Անդրանիկ Զորավարին: Բացման խոսքով հանդես եկավ միջոցառումների բաժնի վարիչ Անահիտ Մանուչարյանը: Գրադարանի բարեկամ Ռուբեն Միմոնյանը խոսեց Անդրանիկ Զորավարի մասին և գրադարանին նվիրեց իր կողմից հեղինակած նորատիպ Անդրանիկ -150 «Մատուքներ» գրքի 4 օրինակ: Արվեստի և ոչ գրքային հրատարակությունների բաժնի վարիչ Աիդա Ադամյանը համառոտ ներկայացրեց մեծ զորավարի կյանքն ու գործունեությունը: Բաժնի աշխատակից Հասմիկ Առաքելյանը խոսեց Ադրանիկի և Հովհաննես Թումանյանի մտերմության մասին՝ «Բանաստեղծը և զորավարը» խորագրով: Այնուհետև «Մեծերը Անդրանիկի մասին» խորագրով ելույթ ունեցավ Արմինե Մելիքջանյանը: Միջոցառումանը զուգահեռ էկրանին ցուցադրվում էին Զորավար Անդրանիկի հերոսական դրվագների, մարտական ընկերների խմբանկարները, և հուշարձանների լուսանկարները: Միջոցառումը ավարտվեց Մայր-Նովա մշակութային միության Ջիվանու անվան աշուղական դպրոցի սաների հայրենասիրական երգերի կատարումներով: